

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի 598-րդ հոդվածում՝ լրացնել 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«4) օրենքով կարող են սահմանվել նվիրատվությունն արգելելու այլ դեպքեր»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԱՐԶԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության Բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Կառավարություն ԱԺ պատգամավոր Կորյուն Նահապետյան ԱԺ պատգամավոր Դավիթ Հարությունյան	1. Նկատի ունենալով GRECO-ի կողմից ՀՀ գնահատման 3-րդ փուլի զեկույցով ներկայացված առաջարկությունները՝ անհրաժեշտ է նախագծում լրացնել դրույթներ, որոնք կվերաբերեն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ընտրական օրենսգրքի դրույթների խախտման համար վարչական պատասխանատվություն կիրառելու վաղեմության ժամկետի երկարաձգմանը: 2. Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է հանել, քանի որ այն ըստ էության կրկնում է նախագծի 4-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները: 3. Նկատի ունենալով, որ Ընտրական օրենսգրքում կիրառվում է «նախընտրական քարոզչություն» հասկացությունը՝ առաջարկում ենք «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում և նախագծում «ընտրարշավ» բառը փոխարինել «նախընտրական քարոզչություն» բառով:	1. Ընդունվել է 2. Ընդունվել է 3. Ընդունվել է	1. Նախագիծը լրացվել է նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ «Սույն օրենսգրքի 40.3-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ և 189.16-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից մեկ տարվա ընթացքում» 2. Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է: 3. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: 4. Նախագծի 1-ին հոդվածում լրացվել է դրույթ՝

	4. Նախագծում լրացվում է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ընտրական օրենսգրքի դրույթների խախտման համար վարչական պատասխանատվություն կիրառելու վաղեմության ժամկետի երկարաձգմանը վերաբերող դրույթ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով արդեն սահմանված է, որ եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Հիշյալ դրույթով խնդիրը լուծվում է և լրացման անհրաժեշտություն չկա:	4.Ընդունվել է մասամբ	բացառություն սահմանելով օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի համար, քանի որ ստուգումների ընթացակարգով հնարավոր է բացահայտել կուսակցությունների կողմից միայն որոշ վարչական իրավապատումներ կատարելու դեպքերը:
--	--	-----------------------------	---